Հավելված 4
«ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃ-2/18-ԴԵՂՈՐԱՅՔ» ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃ-2/18-ԴԵՂՈՐԱՅՔ-1

ք.Երևան ____/_____/2018թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն-ը ի դեմս Արամ Հակոբյան-ի, որը գործում է ՀՀ ազգային անվտանգության ծառայություն -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Դավթյան-ի, որը գործում է Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:
2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,
2.1.8 Ընտրել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2 Գնորդը պարտավոր է՝
2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1039370.28 (մեկ միլիոն երեսունինները հազար երեք հարյուր յոթանասուն քսանութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի

նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ։

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը։

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար։

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով։

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և

գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]։
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։
8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.
1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով,

որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[1]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ
Հասցե՝ Նալբանդյան 104	Հասցե՝ Արշակունյաց 2-րդ նրբ; տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Էվոկաբանկ
900011301075	1660004154880100
01507079	02542882
Արամ Հակոբյան	Ա.Դավթյան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

HAKOBYAN ARAM 3507590174

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2018.12.12 13:46:42 +04'00'

Digitally signed by GHUKASYAN ARMINE 6209750265
Date: 2018.12.12 12:00:04 AMT

Հավելված N 1
____/_____/2018թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃ-2/18-ԴԵՂՈՐԱՅՔ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	33611110/6	ալյումինիումի հիդրոքսիդ + մագնեզիումի հիդրոքսիդ a02aa04 a02ab01 g04bx01	Սանոֆի-Ավենտիս Ս.պ.ա., Վիալե Եուրոպա 11, 21040 Օրիջիո (ՎԱ)՝Սանոֆի-	Դեղակախույթ ներքին ընդունման, 35մգ/մլ+40մգ/մլ, 250մլ շշիկ: Կցված է 5e235fdb.p	հատ	1118.00	33540.00	30	Քաղ. Երևան, Ամիրյան 23	30	15.12.2018թ.

		Մաալօքս	Ավենտիս Ֆրանս, 1-13 բուլվար Ռոմեն Ռոլան, 75014 Փարիզ (Ֆրանսիա)-ի համար	df							
14	33611280/4	գլիկլազիդ a10bb09 Գլիկլազիդ Կանոն	Կանոնֆարմա պրոդակշն ՓԲԸ, 105, Զարեչնայա փ. 141100 Մոսկվայի շրջան, Սչելկովո	Դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ, 60մգ; (30/3x10/), բլիստերում Կցված է e2aa168b.pdf	հատ	67.00	402000.00	6000	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
									Ք. Երևան, Ամիրյան 23	6000	15.12.2018թ.
15	33621620/2	սպիրոնոլակտոն c03da01 Վերոշպիրոն	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	դեղահատեր, 25մգ; (20/1x20/), բլիստերում Կցված է 3a5d9acf.pdf	հատ	37.80	22680.00	600	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
									Ք. Երևան, Ամիրյան 23	600	15.12.2018թ.
34	33691185/3	հորթի արյան սպ	Տակեդա Ավստրիա	լ-թ ներարկման	հատ	1078.17	129380.40	120	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը

		իտակուցա զերծ ածանցյալ B06AB Ակ տովեգին	ԳՄԲՀ, Ստ. Փիտեր փ. 25, Ա-4020 Լինց՝ Տակեդա Ֆ արմասյու տիկալս ՍՊԸ, Ուստաչևի փ. 2, շ. 1, Մոսկվա 119048, Ռուսաստան-ի համար	40մգ/մլ; (5) ամպուլներ 5մլ Կցված է 3188ba62.pdf					Քաղ. Երևան, Ամիրյան 23	120	15.12.2018թ.
41	33631380/2	տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04 Միդոկալմ	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Դեղահատեր թաղանթապատ, 150մգ, (30/3x10/) բլիստերում Կցված է 34cc70d4.pdf	հատ	76.00	57007.48	750	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
									Քաղ. Երևան, Ամիրյան 23	750	15.12.2018թ.
46	33611440/4	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինի	Սոֆարմա ԲԸ, Իլիենսկոշոսե փ. 16, 1220 Սոֆիա	Լուծույթն/ե և մ/մ ներարկման, 5մգ/մլ+1մգ/մլ+5մգ/մլ+50մգ/մլ	հատ	143.21	14321.00	100	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
									Քաղ. Երևան, Ամիրյան 23	100	15.12.2018թ.

		նատրիումական ֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), նիկոտինամիդ A11EX Վիտամին B համալիր		; (10) 2մլ ամպուլ Կցված է a3c0e53d.pdf							
47	33611290/4	գլիմեպիրիդ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ) A10BD02, A10BB12, A10BA02 Ամարիլ Մ	Հանդոկ ինկ., 78 Դաեպունգսանդան-ռո, Դաեսոմյեոն, Էումսեոնգ-գուն, Չունգչեոնգբուկ-դո, Հարավային Կորեա՝ Սանոֆի-ավենտիս գրուպ, 54, ռուե Լա Բոետիե,	2մգ+500մգ; (30/3x10/) բլիստերում, դեղահատեր թաղանթապատ Կցված է 9a6b4312.pdf	հատ	91.84	137760.00	1500	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
									Ք. Երևան, Ամիրյան 23	1500	15.12.2018թ.

			75008 Փարիզ, (Ֆրանսիա)-ի համար								
48	33621550/2	ռամիպրիլ C09AA02 Ամպրիլան	ԿՈԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմ արյեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո	դեղահատեր 5մգ; (30/3x10/) բլիստերում Կցված է 8f327fca.pdf	հատ	46.29	41661.00	900	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
									Ք. Երևան, Ամիրյան 23	900	15.12.2018թ.
49	33621560/2	ռամիպրիլ, հիդրոքլորոթիազիդ C09BA05 Ամպրիլան ՀԴ	ԿՈԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմ արյեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո	դեղահատեր 5մգ+25մգ; (30/3x10/) բլիստերում Կցված է d3ff542d.pdf	հատ	58.99	53091.00	900	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
									Ք. Երևան, Ամիրյան 23	900	15.12.2018թ.
50	33691187/4	վինպոցետին N06BX18 Կավինտոն Ֆորտե	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	Դեղահատեր, 10մգ; (30/2x15/) բլիստերում, (90/6x15/) բլիստերում Կցված է 323608ca.pdf	հատ	60.44	36264.00	600	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
									Ք. Երևան, Ամիրյան 23	600	15.12.2018թ.

56	33691190/3	թիոկտաթթու (ալֆա- լիպոյաթթու) A16AX01, A05BA Թիոկտացիդ 600 S	ՄԵԴԱ Ֆարմա ԳՄԲՀ & Քո. ԿԳ, Բենզշտրասե 1, 61352 Բադ Հոմբուրգ՝ բացթողման հսկող, Համելն Ֆարմասյուտիկալս ԳՄԲՀ, Լանգես Ֆելդ 13, 31789 Համելն, Գերմանիա՝ դեղաձևարտադրող, փաթեթավորող՝ ՄԵԴԱ Ֆարմա ԳՄԲՀ & Քո. ԿԳ, Բենզշտրասե	Լուծույթ ներարկման, 25մգ/մլ; (5) ամպուլներ 24մլ Կցված է 0a23ca3d.pdf	հատ	2076.00	51900.00	25	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
									Քաղ. Երևան, Ամիրյան 23	25	15.12.2018թ.

			1, 61352 Բադ Հոմբուրգ (Գերմանիա								
73	33691209/2	տամսուլոզին (տամսուլոզինի հիդրոքլորիդ) - G04CA02 Տամսուլ	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ՝ բացթողնման հսկող, Գեդեոն Ռիխտեր Ռումինիա Ս.Ա., 99-105 Գուզա Վոդա փ., 540306, Տարգու-Մուրես, Ռումինիա՝դեղաձևն արտադրող, փաթեթավորող,	դեղապատիճներ կարգավորվող ձերբազատմամբ, 0,4մգ; (10/1x10/) և (30/3x10/) բլիստերում Կցված է 7d5a9749.pdf	հատ	161.28	48384.00	300	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
									Ք. Երևան, Ամիրյան 23	300	15.12.2018թ.

			Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ (Հունգարիա)-ի համ								
74	33621390/2	ամիոդարոն և c01bd01 Կորդարոն	Խինոին Դեղագործական և Քիմիական Գործարան Փրայվիտ Քո. ՍՊԸ, 2112 Վերեսեգիհազ, Լեվաի ու. 5՝Սանոֆի-Ավենտիս Ֆրանս, 1-13 բուլվար Ռոմեն Ռոլան, 75014 Փարիզ (Ֆրանսիա)-ի	դեղահատեր բաժանելի,200մգ; (30/2x15/) բլիստերում Կցված է 8ac5946f.pdf	հատ	63.23	11381.40	180	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
									Ք. Երևան, Ամիրյան 23	180	15.12.2018թ.

			համար						

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Հասցե՝ Նալբանդյան 104

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011301075

01507079

Արամ Հակոբյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

HAKOBYAN ARAM 3507590174

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2018.12.12 13:47:24 +04'00'

ՎԱՃԱՌՈՂ

Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ

Հասցե՝ Արշակունյաց 2-րդ նրբ; տուն 2

Էվոկաբանկ

1660004154880100

02542882

Ա.Դավթյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by GHUKASYAN ARMINE 6209750265
Date: 2018.12.12 12:00:26 AMT

Հավելված N 2
____/_____/2018թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃ-2/18-ԴԵՂՈՐԱՅՔ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	33611110/6	ալյումինիումի հիդրոքսիդ + մագնեզիումի հիդրոքսիդ a02aa04 a02ab01 g04bx01												33540.00	33540.00
14	33611280/4	գլիկլազիդ												40200	40200

		a10bb09												0.00	0.00
15	33621620/2	սպիրոնոլակտոն c03da01												22680.00	22680.00
34	33691185/3	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ B06AB												129380.40	129380.40
41	33631380/2	տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04												57007.48	57007.48
46	33611440/4	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինի նատրիումական ֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), նիկոտինամիդ A11EX												14321.00	14321.00
47	33611290/4	գլիմեպիրիդ, մետֆորմին (մետֆորմինի												137760.00	137760.00

		հիդրոքլորիդ) A10BD02, A10BB12, A10BA02													
48	33621550/2	ռամիպրիլ C09AA02												41661.00	41661.00
49	33621560/2	ռամիպրիլ, հիդրոքլորոթիազիդ C09BA05												53091.00	53091.00
50	33691187/4	վինպոցետին N06BX18												36264.00	36264.00
56	33691190/3	թիոկտաթթու (ալֆա-լիպոյաթթու) A16AX01, A05BA												51900.00	51900.00
73	33691209/2	տամսուլոզին (տամսուլոզինի հիդրոքլորիդ) - G04CA02												48384.00	48384.00
74	33621390/2	ամիոդարոն c01bd01												11381.40	11381.40

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Հասցե՝ Նալբանդյան 104

ՎԱՃԱՌՈՂ

Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ

Հասցե՝ Արշակունյաց 2-րդ նրբ; տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011301075

01507079

Արամ Հակոբյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

HAKOBYAN ARAM 3507590174

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2018.12.12 13:48:49 +04'00'

Էվոկաբանկ

1660004154880100

02542882

Ա.Դավթյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by GHUKASYAN ARMINE 6209750265
Date: 2018.12.12 12:00:43 AMT

Հավելված N 3
____/_____/2018թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃ-2/18-ԴԵՂՈՐԱՅՔ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների,մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	ալյումինի հիդրոքսիդ + մ	Դեղակախույթ ներքին ըն						

	ագնեզիումի հիդրոքսիդ a02aa04 a02ab01 g04bx01	դունման, 35մգ/մլ+40մգ/մլ, 250մլ շշիկ :(Կցված է 5e235fdb.pdf)						
14	գլիկլազիդ a10bb09	Դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ, 60մգ; (30/3x10/), բլիստերում(Կցված է e2aa168b.pdf)						
15	սպիրոնոլակտոն c03da01	դեղահատեր, 25մգ; (20/1x20/), բլիստերում(Կցված է 3a5d9acf.pdf)						
34	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ B06AB	լ-թ ներարկման 40մգ/մլ; (5) ամպուլներ 5մլ(Կցված է 3188ba62.pdf)						
41	տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04	Դեղահատեր թաղանթապատ, 150մգ, (30/3x10/) բլիստերում(Կցված է						

		34cc70d4.pdf)						
46	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինի նատրիումական ֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), նիկոտինամիդ A11EX	Լուծույթն/ե և մ/մ ներարկման, 5մգ/մլ+1մգ/մլ+5մգ/մլ+50մգ/մլ; (10) 2մլ ամպուլ(Կցված է a3c0e53d.pdf)						
47	գլիմեպիրիդ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ) A10BD02, A10BB12, A10BA02	2մգ+500մգ; (30/3x10/) բլիստերում, դեղահատեր թաղանթապատ(Կցված է 9a6b4312.pdf)						
48	ռամիպրիլ C09AA02	դեղահատեր 5մգ; (30/3x10/) բլիստերում(Կցված է 8f327fca.pdf)						
49	ռամիպրիլ, հիդրոքլորոթիազիդ C09BA05	դեղահատեր 5մգ+25մգ; (30/3x10/) բլիստերում(Կցված է d3ff542d.p						

		df)						
50	վինպոցե տին N06BX18	Դեղահատ եր, 10մգ; (30/2x15/) բլիստերու մ, (90/6x15/) բլիստերու մ(Կցված է 323608ca. pdf)						
56	թիոկտաթ թու (ալֆա- լի պոյաթթու) A16AX01, A05BA	Լուծույթ ն երարկմա ն , 25մգ/մլ; (5) ամպու լներ 24մլ(Կցված է 0a23ca3d. pdf)						
73	տամսուլո զին (տամ սուլոզինի հիդրոքլոր իդ) - G04CA02	դեղապա տիճներ կ արգավոր վող ձերբ ազատմա մբ, 0,4մգ; (10/1x10/) և (30/3x10/) բլիստերու մ(Կցված է 7d5a9749. pdf)						
74	ամիոդար ոն c01bd01	դեղահատ եր բաժան ելի,200մգ; (30/2x15/) բլիստերու մ(Կցված է 8ac5946f. pdf)						

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության

բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	**Ապրանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 3.1
____/_____/2018թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃ-2/18-ԴԵՂՈՐԱՅՔ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն -ի (այսուհետ՝ Գնորդ) և Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող)
միջև 20 թ._____ -ին կնքված N_____
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
ալյումինիումի հիդրօքսիդ + մագնեզիումի հիդրօքսիդ a02aa04 a02ab01 g04bx01	հատ	
գլիկլազիդ a10bb09	հատ	
սպիրոնոլակտոն c03da01	հատ	
հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ B06AB	հատ	
տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04	հատ	
թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինի նատրիումական ֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), նիկոտինամիդ A11EX	հատ	
գլիմեպիրիդ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ) A10BD02, A10BB12, A10BA02	հատ	
ռամիպրիլ C09AA02	հատ	
ռամիպրիլ, հիդրոքլորոթիազիդ C09BA05	հատ	
վինպոցետին N06BX18	հատ	
թիոկտաթթու (ալֆա-	հատ	

լիպոյաթթու) A16AX01, A05BA		
տամսուլոզին (տամսուլոզինի հիդրոքլորիդ) - G04CA02	հատ	
ամիոդարոն c01bd01	հատ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն